



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԻՔԻՆ Է



Այս տարի լրանում է Ամերիկյան համալսարանի 20 տարին: Կալիֆոռնիայի Ամերիկյան համալսարանը, Հայկական բարեգործական միությունը քսան տարի առաջ ծրագրեցին ՀՀ-ում Ամերիկյան համալսարանի ստեղծումը: Դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Ամերիկյան համալսարանի հիմնադիր և պրովոստ Արմեն Տեր-Կյուրեղյանը նշեց, որ Կալիֆոռնիայի համալսարանի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի միջև կա պաշտոնապես հաստատված համաձայնագիր: Նա ասաց, որ այսօր համալսարանն ունի 2000 շրջանավարտ, որոնցից 80 տոկոսն աշխատում են տեղում, ներկայումս համալսարանում սովորում են 400 ուսանողներ:

«Մեզ մոտ ուսանողները ծանոթացնում են արևմտյան մոտեցումներին` թե՛ լեզվի, թե՛ աշխատառճի առումով, օրինակ` մենեջմենթ ուսումնասիրողն ուսանում է ամերիկյան դասագրքերով, արևմտյան մոտեցումներին ու աշխատաձևերին է տիրապետում, ինչն առավելություն է ստեղծում աշխատանքում հետագայում առաջ գնալու համար», -նկատեց Արմեն Տեր-Կյուրեղյանը: Նա նշեց, որ ունեն երեք տիպի դասախոսներ` հիմնական, պարբերաբար և հրավիրված, համալսարանը ծրագրում է հետագայում ընդլայնել հիմնական դասախոսական կազմը:

Դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Ամերիկյան համալսարանի նախագահ Բյուս Բողոսյանը ներկայացրեց միջոցառումների ցանկը` նվիրված համալսարանի 20-ամյակին: Մեկ շաբաթ անընդմեջ միջոցառումներ կլինեն, որտեղ կներկայացվի Ամերիկյան համալսարանի պատմությունը` նաև համալսարանի մասին պատմող գրքի ու ֆիլմի միջոցով: Նա նշեց, որ համալսարանը շուտով կթողարկի ռազմավարական ծրագիր` 2012-16 թվականների համար, որը կներառի նաև բակալավրին հավասարազոր աստիճան: Այն մտադիր են կյանքի կոչել արդեն 2013-ի սեպտեմբերին: Նրա խոսքերով` սա թույլ կտա համալսարանին չորս անգամ ավել ուսանողներ և ավելի երիտասարդ դասախոսական կազմ ունենալ:

7-10 տարի հետո, Բողոսյանի կանխատեսումներով, Ամերիկյան համալսարանը կստանա ավելի շատ միջազգային բնույթ, բազմազան ուսանողական անձնակազմ, ընդլայնված դասախոսական կազմ, որոնց հրապարակումները կտպագրվեն միջազգային ամսագրերում և պարբերականներում: